Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2025 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 4-ը ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանի Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն (Լոնդոն) կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Հովհաննես Մարտիրոսյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ**

   ՀՀ բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

   Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, ք. Լոնդոն, 2025 թվականի նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 4-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   Հրավերը ստացվել է «Ապագայի ռեսուրսների ապահովում» համաժողովի կազմակերպիչների կողմից:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ (ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ Ո՞Ր ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԷՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾՈՒՂՈՒՄԸ)**

Մասնակցություն «Ապագայի ռեսուրսների ապահովում» խորագրով միջազգային հանքարդյունաբերական համաժողովին:

Միջազգային համաժողովի նպատակն էր միավորել հանքարդյունաբերության, էներգետիկայի և բնապահպանական կառավարման ոլորտների պետական, մասնավոր և գիտական կառույցների ներկայացուցիչներին՝ քննարկելու կայուն զարգացման, պատասխանատու հանքարդյունաբերության և շրջակա միջավայրի պահպանության արդիական մարտահրավերներն ու հնարավորությունները:

Հայկական պատվիրակության կազմում ընդգրկված էին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացուցիչները՝ նախարարի գլխավորությամբ և հանքարդյունաբերական մասնավոր հատվածի ներկայացուցիչները:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

«Ապագայի ռեսուրսների ապահովում» խորագրով միջազգային հանքարդյունաբերական համաժողովին քննարկվել են հետևյալ թեմաները.

<u>Կառավարական կլոր-սեղան քննարկում</u>

Թեմա՝ Ինչպե՞ս կարող են կառավարությունները, հանքարդյունաբերությունը և ֆինանսական հաստատությունները համագործակցել՝ Մեծ Յոթնյակի կարևորագույն հանածոների գործողությունների ծրագրի հիմնական սյուները արագացնելու համար:

- Ստանդարտների վրա հիմնված շուկաների կառուցում,
- կապիտալի և ռազմավարական գործընկերությունների մոբիլիզացիա,
- նորարարության խթանում մատակարարման շղթայում:

<u>Թեմատիկ կլոր սեղան-քննարկումներ</u>

Թեմա՝ Մարտկոցներում օգտագործվող մետաղներ՝ հանքից մինչև շուկա, կայուն կերպով:

Քննարկվել են մարտկոցների մետաղների՝ լիթիումի, կոբալտի և նիկելի ամբողջ մատակարարման շղթայի կայուն կազմակերպման հարցերը՝ հանքավայրից մինչև վերջնական շուկա: Անդրադարձ է կատարվել պատասխանատու հանքարդյունաբերությանը, բնապահպանական և սոցիալական չափանիշների պահպանմանը, ֆինանսավորման կայուն մեխանիզմներին, մատակարարման շղթաների թափանցիկությանը և շրջակա միջավայրի ազդեցության նվազեցման գործնական լուծումներին:

Թեմա՝ Արագացնելով հայտնաբերումը. ինչպես են արհեստական բանականությունը, տվյալները և խելացի ֆինանսավորումը արագացնում հանքարդյունաբերական նախագծերի զարգացումը:

Քննարկման ժամանակ կարևորվեց կայուն ֆինանսավորման գործիքների, ինչպիսիք են «կանաչ» պարտատոմսերը, կայունության հետ կապված վարկերը և խառը ֆինանսավորման մեխանիզմների կիրառությունը՝ կապիտալը պատասխանատու հանքարդյունաբերական ծրագրեր ուղղորդելու համար:

Թեմա՝ Կարևոր հանքանյութեր, աճի հավասարակշռումը աշխարհաքաղաքական միջավայրում:

Քննարկման ժամանակ ուսումնասիրվել է կարևոր նշանակություն ունեցող օգտակար հանածոների և գլոբալ աշխարհաքաղաքականության փոխկապակցվածությունը՝ ընդգծելով լիթիումի, կոբալտի և հազվագյուտ մետաղների ռազմավարական ռեսուրսների ապահովման նշանակությունը:

7. <u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>

Հայկական պատվիրակության կազմում մասնակցել եմ հետևյալ հանդիպում-քննարկումներին՝

- Հանդիպում Հանքարդյունաբերության և մետաղների միջազգային խորհրդի (ICMM) նախագահ և գործադիր տնօրեն Ռոհիտեշ Դհավանի հետ: Անդրադարձ է կատարվել

հանքարդյունաբերության ոլորտում կայուն զարգացման միջազգային չափանիշների ներդրման, բնապահպանական ռիսկերի նվազեցման, թափանցիկության և հաշվետվողականության բարձրացման հարցերին՝ որպես ներդրողների վստահությունը ամրապնդող և նոր ներդրումներ ներգրավող կարևոր պայմանների: Ներկայացվել է, որ ՀՀ կառավարությունը հաստատել է հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմավարությունը, ինչպես նաև դրա գործողությունների պլանը, որով սահմանվում են ոլորտում միջազգային չափանիշների և առաջադեմ մոտեցումների ներդրման ռազմավարական նպատակներն ու իրականացվելիք գործողությունները: Անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի՝ CRIRSCO-ին անդամակցելու նպատակադրվածությունը, տեխնոլոգիական և տվյալների կառավարման բարեփոխումների, ինչպես նաև Հայաստանում արդեն ներդրված միջազգային տարբեր ստանդարտներին և դրանց ազդեցությանը:

- Հանդիպում ԱՄՆ պետդեպարտամենտի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով Եվրոպայի, Եվրասիայի և Կենտրոնական Ասիայի բյուրոյի ԱՄՆ աջակցության ժամանակավոր համակարգող Քրիսթեն Սելենջերի հետ: Քննարկվել է Հայաստանում փոքր մոդուլյար ռեակտորների կիրառման հնարավորությունը: Ամերիկյան կողմը ներկայացրեց Նահանգների փորձը այս ոլորտում, տեխնոլոգիական լուծումները և հնարավոր համագործակցության առաջարկները: Քննարկման ընթացքում անդրադարձ եղավ նաև երկրաբանական ծառայությունների ստեղծման ուղղությամբ Հայաստանի ծրագրերին, ինչպես նաև ԱՄՆ Երկրաբանական ծառայության հետ համագործակցության հնարավորություններին՝ մասնագիտական աջակցության, կարողությունների զարգացման և տվյալների կառավարման բարելավման հարցերին:
- SLR Consulting ընկերության ներկայացուցիչների հետ հանդիպման ընթացքում քննարկեցինք հանքարդյունաբերության ոլորտում միջազգային չափանիշների կիրառման հնարավորությունները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման մեթոդներին, թափոնների կառավարման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և կլիմայական ռիսկերի նվազեցման մոտեցումներին:
- Միացյալ Թագավորության արտաքին գործերի գրասենյակի Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի վարչության պետի տեղակալ Մարկ Քլեյթոնի հետ հանդիպմանը անդրադարձ կատարվեց TRIPP-ի, Խաղաղության խաչմերուկի հետ կապված և ընդհանուր խաղաղությանը վերաբերող հարցերին:
- Հանդիպում Լոնդոնի մետաղների բորսայի կորպորատիվ վաճառքի բաժնի ղեկավար Քրիստիան Միլդների հետ: Հանդիպման ընթացքում ներկայացվել է բորսայում ընկերությունների ցուցադրման ընթացակարգը, քննարկվել, թե ինչ պահանջների պետք է համապատասխանեն ընկերությունները՝ բորսայում ցուցադրվելու համար: Շրջայց է կատարվել բորսայի տարածքում՝ ծանոթանալով գործառնական գործընթացներին և բորսայի կառավարման համակարգին:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հանդիպումների ընթացքում ձեռք են բերվել փոխհամագործակցության ամրապնդման վերաբերյալ նախնական պայմանավորվածություններ, քննարկվել է երկկողմ շփումները շարունակելու հնարավորությունը:
Միջոցառման ընթացքում փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Առաջարկվել է ակտիվացնել միջազգային գործընկերների հետ համագործակցությունը՝ փորձի փոխանակման և ներդրումային նոր հեռանկարների բացահայտման համար:

Բնապահպանության և ընդերքի
տեսչական մարմնի ղեկավար՝

10.12.2025

X

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Signed by: MARTIROSYAN HOVHANNES 3212790148 Հովհաննես Մարտիրոսյան

10.12.2025 թ.